Երեւանի վիճակից բոլոր վատթար մարդկանց, աղմկարարներին ու չարերին, որպէսզի ժողովուրդն ապրի առաքինութեամբ զարդարուած:

«Թեզ իրաւունք տուինք՝ քո խորհրդակիցների համաձայնութեամբ վճռաւելու հողը «մեր սեպհական ազգին» — չինութեան, բնակութեան, այգիների ու մշակութեան համար, պայմանով, որ իւրաքանչիւր գնող պարտաւորուի հատուցանել օրէնքով սահմանուած տուրքը պետութեան:

«Պատուիրում ենք քեզ, որ երկիրդ կառավարես հայոց օրէնքով»:

Այս ամէնի հետ միասին՝ իշխանի բոլոր քայլերը համապատասխան պիտի լինին օրէնքին. յետին քաղաքացին անգամ կարող է դատարանի առջեւ պատասխանատուութեան կանչել նրան՝ քմահաճոյքի եւ օրինազանցութեան համար: Իշխանն է պատասխանատու, անձնապէս, իր նահանգի բարօրութեան համար. օրինակ, գողերի ու աւազակների յափշտակած իրերի համար նա ինքը վճարում է տէրերին, մինչեւ որ գտնի գողերին ու աւազակներին ու յետ խլի նրանցից գողացուած ապրանքը (ճիշ): Կամ՝ եթէ պարտապան բանտարկեալը բանտից փախչում է, իշխանն է վճարում պարտատիրոջը՝ պահանջուող գումարը (ճկզ):

Հեղինակը չի մոռացել մինչեւ իսկ յատուկ օրէնքով սահմանել, թէ տարեկան քանի՞ խընջոյք պիտի տայ իշխանը, ե՞րբ եւ ի՞նչ կենցներ ու ի՞նչպէս պիտի առաջարկուեն այնտեղ (յիդ):

ԶՕՐԲԸ

Պետութեան նեցուկն ու յենարանը հանդիսանում է զօրքը, որը առանձին խնամքի ու հոգածութեան առարկայ է Շահամիրեանի համար:

Նա փորձում է նախատեսել զօրքի ու զինուորական կեանքի մէջ կատարուող բոլոր ենթադրութիւնները եւ համապատասխան օրէնքներ սահմանել, չմոռանալով նոյնիսկ, օրինակ, որ իւրաքանչիւր զինուոր «պարտ է ունենալ զէնս յստակ, օծեալ իւղով եւ պատրաստ (յե), որ զինուորը զգեստը պիտի պահի մաքուր եւ մաղերը օծեալ. (յդ), որ իր քսակում նա միշտ պատրաստ պիտի ունենայ որոշուած քանակութեամբ փամփուշտ, կայծաքար (յզ) եւն.:

Համաձայն հեղինակի օրէնքների՝ Հայաստանն ունենալու է մշտական զօրք, բայց ոչ պարտադիր զինուորական ծառայութիւն, ինչպէս այդ մինչեւ վերջին ժամանակները գոյութիւն ունէր Պարսկաստանում, որի օրինակը թերեւս ի նկատի ունի մեր հեղինակը:

Թէեւ իւրաքանչիւր այր-մարդ — ըստ Շահամիրեանի — համարւում է հայրենիքի զինուոր եւ պարտաւոր է 12 տարեկան հասակից ունենալ իր սեպհական զէնքերն ու զինուորական արհեստը սովորել (ճիշ), բայց նա դեռ եւս զինուոր չէ — բառի բուն նշանակութեամբ — եւ զինուորական շարքերի մէջ դեռ չի մտնում պարտադրաբար:

Զինուորութիւնը, մեծագոյն մասով, կամաւոր է եւ վճարւում է պետութեան կողմից. սակայն մի անգամ արդէն զօրաշարքի մէջ մտած զինուորը պարտաւոր է ծառայել մինչեւ պայմանաժամի լրանալը, այն է՝ 7 տարի (միէ): Տասնապետից սկսած բոլոր բարձր զինուորականները կարող են ժամանակից առաջ հրաժարական տալ եւ հեռանալ ծառայութիւնից. բայց եթէ կրկին պաշտօնի մտնել ցանկանան, կ՝ընդունուին իրենց նախկին աստիճանից երեք աստիճան ցած (մկթ):

Միւս կողմից՝ Հայաստանի բանակը ազգային է, անպայմանօրէն հայերից միայն բաղկացած: Ոչ-հայը չի կարող վարձուել եւ հայկական զօրքերի մէջ ծառայել (ճժա):

Զօրքի ընդհանուր թիւն է 90,000, որից 69,000-ը հետեւակ, 21,000-ը՝ հեծեալ: Ամբողջ զօրքը բաժանւում է 3 բանակի կամ 3 սպարապետութեան — որոնք հեղինակը «խումբ» է կոչում. իւրաքանչիւր բանակի մէջ կայ 23,000 հետեւակ եւ 7,000 հեծեալ (միէ): Հետեւակի եւ հեծեալի սոյն յարաբերութիւնը պահպանւում է եւ ամէն մէկ մանր ու խոշոր բաժանման մէջ (յխգ): Եթէ կամաւորներով չի լրանում զօրքի պահանջուած քանակութիւնը — 90,000 մարդ — այդ դէպքում պակասորդը լրացւում է վիճակահանութեամբ ըստ դաւառների. իւրաքանչիւր դաւառ տալիս է զինուորութեան ընդունակ իր բնակչութեան 5 տոկոսը, վիճակով (յծդ, ճժա):

Երեք բանակները իրարից տարբերւում են եւ կոչւում իրենց դրօշակների գոյնով —